Ցուզրաշյանն իր զեկուցման մեջ վերլուծեց Հ. Օրբելու ստեղծագործական ժառանգության առանձնահատկությունները։ Նա նշեց, որ Հ. Օրբելին եղել է XX դարի հայրենական արևելագիտության, հատկապես Պետերբուրգի դպրոցի լավագույն ներկայացուցիչներից մեկը։ Նա, անշուշտ, շատ բան է յուրացրել դասական արևելագիտությունից և անտիկագիտությունից։ Շատ դեպքերում, սակայն, նա հանդես է եկել որպես ռահվիրա։ Հարուստ հիմք ունեցող ավանդականությունը և գիտական խիզախությունն ապահովեցին Հ. Օրբելու աշխատությունների և ողջ գիտական գործունեության թարմությունն ու նորությունը։

Պատմական գիտությունների թեկնածու Ջ. Ջ. Ջալիլն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայրենական բրդագիտության կազմավորման գործում Հ. Օրբելու ունեցած դժվար գերազանցելի դերին։ Նա ասաց, որ քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի ու լեզվի նկատմամբ մեծ գիտնականի տածած սերը դրսևորվել է թե բրդական բանահյուսության ու լեզվին նվիրված նրա ուսումնասիրություններում, և թե սովետական կարգերի հաստատումից հետո քուրդ ազգային մտավորականության պատրաստման ուղղությամբ նրա գործադրած եռանդուն ջանքերում։ Եվ միանգամայն օրինաչափ է այն մեծ հարգանքը, որ քուրդ ժողովուրդը տածում է նրա հիշատակի նկատմամբ։

Հայ վիմագրագիտությունը, իր զեկուցման մեջ նշեց պատմական գիտությունների դոկտոր Գ. Գ. Գրիգորյանը, համաշխարհային ճանաչման հասցրին Ն. Մառը և Հ. Օրբելին։ Նրանք մշակեցին հայ վիմագրագիտության գիտական սկզբունքներն ու մեթոդները, որոնցով մինչև այժմ առաջնորդվում են հայ վիմագրագետները։ Այդ սկզբունքներն ու մեթոդները Հ. Օրբելին շարադրեց 1914 թ. սեպտեմբերի 6-ին Պետերբուրգի համալսարանում կարդացած իր դասախոսության մեջ։ 1938 թ. օգոստոսի 20-ին նա Սովետական Հայաստանի կառավարության առաջ բարձրացրեց հայերեն վիմագիր արձանագրությունների հավաքման և գիտական հիմունքներով հրատարակման հարցը։ Դրա շնորհիվ է, որ հետագա տարիներին հավաքվեցին ու «Դիվան հայ վիմագրության» մատենաշարով հրատարակվեցին հայկական վիմագիր հազարավոր արձանագրություններ։

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների դոկտոր Գ. Մ. Մուրադյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Ա. Գվախարիան և արվեստագիտության թեկնածու Ն. Ս. Ստեփանյանը։ Գ. Մ. Մուրադյանի զեկուցման թեման էր՝ «Կովկասագիտության հարցերը Հ. Ա. Օրբելու աշխատություններում»։ Ա. Ա. Գվախարիան վերլուծեց իրանագիտության, իսկ Ն. Ս. Ստեփանյանը՝ արվեստի պատմության մեջ Հ. Օրբելու ներդրած շահեկան ավանդը։

Գիտական նստաշրջանում Հ. Օրբելու մասին հետաքրքիր հուշերով հանդես եկան Ս. Տ. Երեմյանը, Բ. Ն. Առաքելյանը, Վ. Մ. Հարությունյանը. Կ. Ն. Ցուզրաշյանը և ուրիշներ, իսկ Ծաղկաձորում բացվեց Օրբելի եղբայրների հուշարձանը։

Հ. Օրբելու ծննդյան 100 ամյակին նվիրված գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։

ԱՐՏԱՇԵՍ ԵԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 275 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 17-ին Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում տեղի ունեցավ մեծ բանաստեղծ և երաժիշտ Սայաթ-Նովայի ծննդյան 275 ամյակին նվիրված գիտական նստաշրջանի բացումը, որ կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեգյանի անվան գրականության ինստիտուտը, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի գրողների միությունը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը։

Նստաշրջանը բացեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Է. Միրզոյանը։ Մեր ժողովուրդը, ասաց նա, նշում է մեծն Սայաթ-Նովայի ծնընդյան 275 ամյակը, որի արձագանքը տարածվում է մեր հանրապետության սահմաններից դուրս, երկրով մեկ։ Սայաթ-Նովան ամենամեծերի մեջ մեծն է և ամենասիրվածների մեջ սիրվածը։ Նրա մասին խոսելիս ամենից առաջ պետք է անդրադառնալ Սայաթ-Նովա երևույթին։ Դա նախ այն է, որ Սայաթ-Նովան գնահատվում և ընդունվում է որպես բանաստեղծ։ Բայց դա քիչ է նրան հատկանշելու և բնութագրելու համար։ Սայաթ-Նովան, պահպանելով աշուղական բանաստեղծության ձևերը, իր հանճարով հավասարվում է բանաստեղծական արվեստի մեծերին։ Հաջորդ երևույթը Սայաթ-Նովա կոմպոզիտորն է։ Երբ խորանում ենք նրա ստեղծագործության մեջ, պարզվում է, որ նա մեծ կոմպոզիտոր է։ Վեր աշուղականից։ Սայաթ-Նովայի երաժշտությունը ունի իր առանձնահատուկ դեմքը, ինքնատիպությունը, միայն նրան բնորոշ լեզու։ Այս առումով նա ինչ-որ տեղ առնչվում է Կոմիտասի

հետ։ Երբ վերջինս ուսումնասիրում և գրի էր առնում գեղջուկ երգը, բազմաթիվ տարբերակներից էր ընտրում այն։ Նույնը կարելի է ասել Սայաթ-Նովա կոմպոզիտորի մասին. քաղաքային երգերից նա ընտրել է ամենատիպականը, դրանց վրա դրոշմելով իր ևսը։ Սայաթ-Նովան հրաշք է նաև որպես երգիչ, որի մասին թեպետ տեղեկություններ չկան, բայց ասում են, որ շատ բաղցր ու անուշ արտակարգ հնչողության ձայն է ունեցել։ Այսպիսով, շարունակեց է. Միրզոյանը, խոսել Սայաթ-Նովայի մասին որպես բանաստեղծի և շրջանցել նրա երաժշտությունն ու կատարողական արվեստը, ճիշտ չի լինի։ Ահա այս ամբողջության մեջ է Սայաթ-Նովան իրոք մեծ ու անհասանելի։

Այնուհետև է. Միրզոյանն ասաց, որ Սայաթ-Նովան որպես բանաստեղծ և կոմպոզիտոր ապրում է մեր ժողովրդի հոգում երկու և կես դարից ավելի։ Ընդհանրապես երգը կարճ կյանք է ունենում, սակայն տվյալ դեպքում Սայաթ-Նովան բացառություն է. այժմ էլ նրա երգը մեզ հուզում է, անչափ սրտամոտ է։ Այսօր այն նոր կյանք է ապրում դաշնամուրային, սիմֆոնիկ, նվագախմբային, երգչախմբային և այլ կատարումներում։

Եզրափակելով իր խոսքը, է. Միրզոյանը նշեց, որ Սայաթ-Նովան ամեն մեկիս հոգում է, սրտում։ Մենք խոնարհվում ենք նրա առաջ «էս գըլխեն իմաստուն», «էն գըլխեն խալխի նոքար» Սայաթ-Նովայի առաջ։

«Սայաթ-Նովան և Գրիգոր Նարեկացին» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Նալբանդյանը։ Հայ քերթության երկու խոշորագույն դեմքերը՝ Գրիգոր Նարեկացին և Սայաթ-Նովան, ասաց նա, չնայած իրենց բանաստեղծական աշխարհներով, իրականության ընկալման փիլիսոփայական և գեղագիտական սկզբունքներով, պոետիկայի ոճով ու ձևերով միմյանցից տարբեր, պատմական այլ դարաշրջաններում ստեղծագործող մեծություններ են, բայց բավական նման են փոթորկոտ ու անսանձ ստեղծագործական բնավորություններով։ Սայաթ-Նովան հանձինս Նարեկի հեղինակի՝ որպես ստեղծագործող, տեսել է, անշուշտ, իր հարազատ արյունակցին՝ իր խռովահույզ ու հեռավոր նախահորը։ Այնուհետև զեկուցողը անդրադարձավ հայ պոեզիայի այդ գագաթների աշխարհայացքային բնույթի որոշ հարցերին, շարադրեց իր նկատառումները դրանց շուրջ։ «Ողբերգության մատյանի» և Սայաթ-Նովայի, մասնավորապես խրատա-բարոյախոսական բովանդակությամբ մի քանի հայտնի խաղերի համեմատական ուսումնասիրությունը հետաքրքիր շփման եզրեր է հայտնաբերում երկու բանաստեղծների աշխարհընկալումների միջև, որոնց հիմքն ու սնուցող ակունքը մարդասիրական նույն աշխարհայացքությունն է, տառապող մարդու ճակատագրի մասին մտահոգությունը, մարդու կատարելագործման ու փրկության նպատակը։ Աշխարհընկալումների որոշ ընդհանրություններից կարելի է, եզրակացնել, նշեց նա, որ մի կամուրջ է ձգված հայ վերածնությունը սկզբնավորող Գրիգոր Նարեկացու և ուշ միջնադարը եզրափակող Սայաթ-Նովայի միջև։

Ուշագրավ զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը։ Նա խոսեց «Լեգենդն ու իրականությունը Սայաթ-Նովայի վարքագրության մեջ» թեմայով։ Անցյալի գրողներից շատերի իրական կեսադրությունը, ասաց նա, հայտնի չէ մեզ, նրանց կյանքի փաստերը սրբվել են սերունդների հիշողությունից, մինչդեռ ստեղծագործությունները հարատևում են դարեր։ Հենց վերջիններն էլ իրենց մեջ արտահայտված քնարական խորհրդածություններով ազդակ են ծառայել հյուսելու յուրօրինակ վարքագրություն, որը, թեև, վիպական է ու գրավիչ, բայց չի հավաստվում պատմական վավերագրերով և ժամանակակիցների հաղորդած տվյալներով։ Լեգենդային են Սայաթ-Նովայի կենսագրության գրեթե բոլոր հանգուցային հարցերը։ Անմահ գուսանն իր ծննդավայրն է համարում Թիֆլիս քաղաքը, մինչդեռ բանասերները հակված են նրան դարձնելու սանահնեցի։ Սայաթ-Նովան գրել-կարդալ սովորել է ինքնաշխատությամբ, մինչդեռ նրան երկու անգամ հաճախել են տալիս Սանահնի վանական դպրոց, ուր, որքան էլ տարօրինակ է, նա սովորել է վրացերեն, որն իրականում այնտեղ չէր դասավանդվում։ Սայաթ-Նովային բոլոր բանասերները միաձայն դարձնում են վրաց թագավորի նորտերից, մինչդեռ նա ծագում էր Թիֆլիսի արտոնյալ քաղաքացիների՝ մոքալաքենների դասից և ժամանակի օրենքների համաձայն իրավունքներ ճորտեր պահել ու վաճառել։ Սայաթ-Նովայի խաղերից պարզ երևում է, որ նրա սիրած էակը եղել է հայուհի, մինչդեռ չգիտես ինչու նրան նույնացնում են Հերակլ թագավորի քրոջ՝ Աննա Բատոնաշվիլու հետ։ Սայաթ-Նովայի խաղերը, վերջում ասաց Պ. Հակոբյանը, քնարական օրագրեր չեն, բայց գրեթե բոլորը ներկայումս մեկնաբանվում են իբրև ծածկագրություններ և ինքնակենսագրական դրվագներ։ Ժամանակն է, որ սայաթնովագետները լեգենդների աշխարհից իջնեն իրական հողի վրա։

Իր զեկուցման մեջ արվեստագիտության թեկնածու Ա. Սարյանն անդրադարձավ «Սայաթ-Նովան երգիչների մեկնաբանմամբ» հարցին։ Միջնադարի մեծ կոմպոզիտորի երաժշտական ժառանգությունը, ասաց նա, շուրջ 200 տարի կենցաղավարել է բանավոր երգաստեղծությամբ։

նրա այդ ժառանգության ուսումնասիրության համար որոշիչ եղավ երաժշտագետ Մուշեղ Աղայանի և երգիչ Շարա Տալյանի ջանքերով գրի առնված և կազմված ժողովածուն։ 30 մեղեդիներից կազմված այդ ժողովածուում որոշակի է երաժշտական ոճական միասնությունը, ստեղծագործողի անհատականությունը։ XVII—XVIII դարերի աշուղական երգերի և հատկապես Սայաթ-Նովայի մեղեդիների ազգային ուղղվածության որոշարկման համար կարևոր եղան կատարողական կերպն ու ոճը։ Հայ երգիչ-երգչուհիներն իրենց նշանակալի ավանդն են բերել Սայաթ-Նովայի ստեղծագործության գեղարվեստական արժեքների բացահայտման գործում, այնուհետև նշեց զեկուցողը։ Հատկապես մեծ է Շարա Տալյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Գոհար Գասպարյանի, ժողովրդական կատարողական ոճի երգիչ-երգչուհիներ Շողիկ Մկրտչյանի, Արաքսի Գյուլզադյանի · Օֆելյա Համբարձումյանի, Նորայր Մնացականյանի, Ռուբեն Մաթևոսյանի ներդրումը։ Յուրաքանչյուրն իր ընկալմամբ, կատարողի իր հմտությամբ ու ոճով մասնակցեց միջնադարի մեծ ստեղծագործողի երգերի կատարման «հայկական» հասկացության կազմավորմանը։

«Մի ճշտում սայաթնովյան բնագրում» վերնագրով հետաքրքիր հաղորդում տվեց բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Ներսիսյանը։ «Աշխարքս մե փանջարա է» երգի 11-րդ տողի («Ղուրքըս էնդուր ճամփա չէ գնում՝ շատացել է խալխի սուտն») վերջին երկու բառերը, որ Գ. Ախվերդյանից սկսած նույնությամբ տպագրել են սայաթնովյան խաղերի բոլոր հրատարակիչները՝ առանց բացառության, երգչի ինքնագիր Դավթարում ունեն «խալի սուտն» ընթերցվածքը, ասաց նա։ Չիմանալով «խալի» բառի ճիշտ իմաստը, Գ. Ախվերդյանն այն դարձրել է «խալխ», ծանոթագրություն թողնելով, թե ժողովրդական երգիչները, ինչպես նաև նրանց կատարումից հրաված օրինակները տալիս են «խալի սուտն» տարբերակը։ Սա լիովին համապատասխանում է Դավթարի գրությանը։ Քանի որ ժողովրդական երգիչները «Աշխարքս մե փանջարա է» խաղը երգել են Դավթարից անկախ՝ հեղինակային կատարումներից պահպանված կենդանի հիշողությամբ, լսածը գրառելու և այդ կերպ տարածելու ճանապարհով, ուրեմն հեղինակի ինքնագրում առկա «խալի» ձևը ոչ թե ուղղման ենթակա սխալ գրություն է, այլ չհասկացված բառ։ «Խալի»-ն պարսկերենից արված բառական փոխառություն է, որն արտահայտում է «անպատկառ, անամոթ, լկտի, լպիրշ» իմաստը և Սայաթ-Նովայի տողում գործածված է իբրև մակդիր։ Այսպիսով, եզրակացրեց Վ. Ներսիսյանը, խալխի նոքարի տողը նորից վերստանում է «Ղուրքըս էնդուր ճամփա չէ գնում՝ շատացել է խալի սուտն» դավթարային գրությունը՝ «ճշմարտությունն այն պատճառով ճանապարհ չի գտնում, [որովհետև] շատացել է լկտի սուտը» բովանդակությամբ։

Գիտական նստաշրջանի երկրորդ նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին Հայաստանի գրողների միության փոքր դահլիճում։ «Սայաթ-Նովայի երգերի եղանակների հարցի շուրջ» թեմայով զեկուցում կարդաց պրոֆեսոր Ռ. Ադալյանը։ Հայտնի իրողություն է, ասաց նա, որ հին աշուղների համար կարևորը խոսքն է եղել, իսկ եղանակը լոկ այդ խոսքն ազդեցիկ դարձնելու միջոց է եղել։ Պատահական չէ, որ ժամանակի ընթացքում ստեղծվել են աշուղական բանաստեղծական առանձին ձևերի հետ կապված, դրանցից բխող ավանդական եղանակներ, որոնցում երգվել են նույն կառուցվածքն ունեցող ոտանավորները՝ անկախ իրենց կոնկրետ բովանդակությունից։ Այս առումով փոքր-ինչ այլ է Սայաթ-Նովայի երգվող խաղերի պարագան։ Նրա երգերի եղանակները, եթե նույնիսկ ծագել են նշված ավանդական եղանակներից կամ ինչ-որ ձևերով օգտագործել են դրանք, երաժշտական առումով եղել են, ստացվել կամ դարձել են գեղարվեստական ինքնուրույն միավորներ։ Այնուհետև զեկուցողը նշեց, որ Սայաթ-Նովայի պահպանված եղանակավոր երգերը քանակով շատ չեն, բայց անչափ բարձր է դրանց ոչ միայն բանաստեղծական, այլև երաժշտական արժեքը, մեծ է դրանց գրաված տեղը հայ ժողովրդի գեղարվեստական կյանքում։ Դրանք նաև որոշակի ազդեցություն են գործել թե՛ հայ աշուղական արվեստի, թե՛ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ստեղծագործության զարգացման վրա։

Զեկուցումը լսվեց մեծ հետաքրքրությամբ և առաջ բերեց մտքերի աշխույժ փոխանակություն։

Բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Բախչինյանի զեկուցումը նվիրված էր Սայաթ-Նովայի գրական ակունքներին։ Սայաթ-Նովան՝ որպես աշուղ-բանաստեղծ, ասաց նա, ունեցել է երկու հիմնական սնուցարան՝ բանահյուսությունն և գրականությունն։ Մեծ ստեղծագործողի կենսափիլիսոփայության ու գրական ճաշակի վրա որոշակի ազդեցություն են ունեցել աստվածաշնչյան և եկեղեցական-ծիսական գրքերը, որոնք պայմանավորել են նրա ստեղծագործության արևմտյան-քրիստոնեական տիպը։ Նրա քնարերգության վրա ներգործություն է ունեցել նաև միջնադարյան հայ բանաստեղծության խոշորագույն կոթողը՝ Նարեկը։ Սայաթ-Նովայի պոեզիայի կարևորագույն ակունքներից է միջնադարյան աշխարհիկ տաղերգությունը։ Աշուղ-բանաստեղծը տաղերգուներից և հատկապես Նաղաշ Հովնաթա-

նից է ժառանգել միջնադարյան քերթողական բնորոշ թեմաներն ու մոտիվները, պոետիկական մի շարք հատկանիշներ։ Բացի այդ, կան Սայաթ-Նովային միջնադարյան տաղերգությանը կապակցող այլ ուղղակի օղակներ ևս (Զաքարիա տաղասաց, Ստեփանոս Դաշտեցի, Հովհաննես Կաֆացի)։ Սայաթ-Նովան, թերևս, բանավոր ճանապարհով հաղորդակցվել է նաև ժողովրդագուսանական հայրեններին. այդ են վկայում երգի խաղերի ու հայրենների որոշ զուգահեռներ։ Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, նկատեց զեկուցողը, որ Սայաթ-Նովան ծանոթ է եղել Պղնձե քաղաքի և Փահլուլ թագավորի ավանդազրույցներին, որոնց մեջ միջնադարյան հայ հեղինակները (Մխիթար, Հովսեփ Աղթամարցի, Զաքարիա Գնունեցի, Գրիգորիս Աղթամարցի) ներմուծել են չափածո հատվածներ (կաֆաներ)։ Որոշակի է, ուրեմն, որ Սայաթ-Նովան այս կամ այն չափով յուրացրել է ինչպես հայ, այնպես էլ օտար գրականության ավանդույթները, առանց որոնց նա, իր հանճարեղությամբ հանդերձ, չէր կարողանա մուտք գործել գրականության ասպարեզ և չէր կարողանա նպաստել նրա զարգացման ընթացքին։

Արվեստագիտության դոկտոր Ն. Թանմիզյանը հանդես եկավ «Սայաթ-Նովան և հայ նոր երաժշտական գեղագիտության սկզբնավորումը» զեկուցումով։ Երբ Սայաթ-Նովան հայտնվեց հայ երաժշտության անծայր հորիզոնի վրա, ասաց նա, մի քանի դարերի ետևում էր մնացել արդեն մեր ազգային երգարվեստի բարձրագույն ձևերի՝ միջնադարյան տաղերի ու մեղեդիների դեռևս չգերազանցված ճարտարկերտությունը։ Սայաթ-Նովան ժառանգեց, գլխավորապես, հայկական ուշ միջնադարի ժողովրդաքաղաքային քնարական երգն ու նրա քառյակային անպաճույճ ձևը։ Եվ հենց դրա մեջ նա ներդրեց խոր մտքեր, մեծ կրքեր ու հույզեր։ Զեկուցողը կանգ առավ Սայաթ-Նովայի գեղագիտական դաղափարների համակարգի վրա, բնորոշ օրինակներով ցույց տվեց, որ անզուգական երգի խաղերում հանդիպում են բազմաթիվ փիլիսոփայական մտքեր՝ աշուղի և նրա դերի, աշուղական արվեստի ու նրա կոչման, երգ-երաժշտության գեղագիտական և բարոյագիտական դերի, սոցիալական արդարության, ազգային հարցի մասին և այլն։ Դրանք ըստ էության իրար լրացնող, խորիմաստ ասույթներ են, որոնք գոյացնում են հայացքների մի կուռ ամբողջություն։ Ուշագրավն այն է, եզրափակելով իր խոսքն ասաց Ն. Թահմիզյանը, որ այդ համակարգի բաղադրիչ տարրերը, առանձին կապեր դրսևորելով միջնադարի հետ, միևնույն ժամանակ, ամբողջությամբ վերցրած, որոշակիորեն դուրս են գալիս հայկական միջնադարյան երաժշտագեղագիտական հարցերի ավանդական շրջանակներից և սկզբնավորում նոր ժամանակներին հատուկ դրույթների ձևավորումն ու տարածումը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Նոյեմբերի 25-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի հոբելյանական նիստը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 70 ամյակին։ Նիստին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Արզումանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ցու. Խաչամիրյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մելքոնյանը։

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 70 ամյակը և գիտության զարգացումը Սովետական Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, ասաց նա, սոցիալական և ազգային ազատություն բերեց մեր երկրի բոլոր ժողովուրդներին, որոնք պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեծ նվաճումների հասան էկոնոմիկայում, մշակույթի և գիտության մեջ։ Սովետական իշխանության առաջին իսկ տարիներից կուսակցությունը գիտության զարգացումը համարում էր դարավոր հետամնացությունն ավելի արագ հաղթահարելու, բարձր զարգացած էկոնոմիկա ստեղծելու նախադրյալ։

Հայաստանում գիտության զարգացումը դարձավ սոցիալիստական սիստեմի առավելությունների, ինտերնացիոնալիզմի և մեր երկրի ժողովուրդների եղբայրական համերաշխության առավել վառ դրսևորումներից մեկը։ Գիտության հաջողությունների հիմքը մի կողմից մեր ժողովրդի գիտական ստեղծագործության ունակությունն հանդիսացավ, մյուս կողմից՝ ռուս գիտնականների շռայլ օգնությունը Հայաստանում գիտական աշխատանքի կազմակերպման գործում։ Այդ օգնությունն արտահայտվեց ոչ միայն կադրերի պատրաստման մեջ, այլև գիտական խոշոր հետազոտություններ իրականացնելիս։ Փորձը ցույց տվեց, որ մենք հաջողությունների էինք հասնում միայն այնտեղ, որտեղ մեր